

ՄՈԿՎՈՎԻՍՑԻԴՈՉՈՎ ՅԻՎԱՆԴՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ «ՈՒՏԵԼՈՒ ՇԵՂՎԱԾ ՎԱՐՔԱԳԻԾԸ» ԵՎ ԴՐԱ ՅՆԱՐԱՎՈՐ ԿԱՊՆ ԱՐՅԱՆ ՄԵՋ ԱՄՈՆԻԱԿԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՅԵՏ

Յարույունյան Ս.Ա.¹, Բաղդասարյան Ն.Գ.¹, Դավթյան Ա.Ռ.²,
Բաղդասարյան Վ.Ս.¹, Առուստամյան Ս.Ա.¹

¹ Երևանի Մ. Յերացու անվ. պետ. բժշկական համալսարանի մանկաբուժության և մանկական վիրաբուժության թիվ 2 ամբիոն, Երևան, Յայաստան

² Երևանի Մ. Յերացու անվ. պետ. բժշկական համալսարանի լաբորատոր ախտորոշիչ կենտրոն, Երևան, Յայաստան

Մուկովիսցիդոզով հիվանդները ցուցաբերում են «ուտելու վատ և շեղված վարքագիծ», անոռեքսիա, որը կարող է ավելի նպաստել ծանր թերսնուցմանը, թոքերի ֆունկցիայի արագ իջեցմանը, ինչով էլ պայմանավորվում է հիվանդության ծանր ելքը:

Նպատակը

Յետազոտման նպատակն է՝ մուկովիսցիդոզով հիվանդների արյան շիճուկում որոշել ամոնիակի մակարդակը և ենթադրել դրա դերի մասին որպես «ուտելու վատ վարքագիծ», անոռեքսիայի հնարավոր պատճառային գործոն:

Մեթոդը

Մուկովիսցիդոզի համալսարանական կենտրոնում գրանցված դիսպանսեր հիվանդների արյան մեջ հետազոտվել է ամոնիակի մակարդակը: Յետազոտման մեջ ընդգրկվել են 4 ամսեկանից մինչև 16 տարեկան հիվանդ երեխաներ: Յետազոտման ընթացքում որոշվել են նաև հիվանդների կլինիկական և սնուցման վիճակը, լյարդի ֆունկցիոնալ թեստերը (ալբումին, տրանսամինազներ, բիլիրուբին, պրոթրոմբինային ժամանակ, հիմնային ֆոսֆատազա, γ -գլյուտամիլտրանսպեպտիդազա, գլյուկոզ), կատարվել է լյարդի ուլտրաձայնային հետազոտություն (փոփոխությունները գնահատվել են ըստ Վիյամսի սանդղակի), 5 տարեկանից բարձր հիվանդներին մոտ կատարվել է թոքերի արտաքին շնչառության որոշում: Լյարդի ֆունկցիոնալ թեստերը և թոքերի արտաքին շնչառության որոշումը կատարվել են հիմնական հետազոտության օրը: Յետազոտման ընթացքում, ծնողներին խորհուրդ է տրվել պահպանել սննդակարգին և ֆերմենտոթերապիային վերաբերյալ ուղեցույցները: Յետազոտման մեջ չեն ընդգրկվել սրացման շրջանում գտնվող հիվանդները:

Արդյունքները

Ստացված տվյալները վկայում են մուկովիսցիդոզով երեխաների մոտ «ուտելու վատ վարքագիծ», անոռեքսիայի և արյան ամոնիակի բարձր մակարդակի հավանական կապի մասին, որը կարիք ունի բազմակենտրոնային հաստատման: